ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2020 թվականի N 258-Ա

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման հավելվածի 34-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2020 թվականի հուլիսի 3-ի N 15 արձանագրությունը *(որոշումը)* **որոշում եմ.**

1. ***Քրիստինե Ատրամի Մանուկյանին*** 2020 թվականի հուլիսի 13-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ *նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:*

2. 2020 թվականի հուլիսի 13-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հայոց լեզվի ուսուցիչ ***Քրիստինե Ատրամի Մանուկյանի*** կողմից՝ կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի լիազորությունների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թվականի հուլիսի 13
ք. Հրազդան